Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1985 - Ն որոշման

1. ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ԴԵՂԱՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀՕԳՈՒՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ

1. Դեղատունը ունի դեղատնային գործունեության իրականացման լիցենզիա.
2. Դեղատունը ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի թիվ 867 որոշմամբ սահմանված դեղատնային գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջների ու պայմանների պահպանումը.
3. Դեղատունը տվել է համաձայնություն դեղերի ծախսերի ապահովագրական հատուցման կարգին համապատասխան ապահովագրական փաթեթի մեջ ներառված դեղերը տրամադրելու համար.
4. Դեղատունն ունի էլեկտրոնային առողջապահության համակարգն սպասարկող օպերատորի հետ կնքված էլեկտրոնային առողջապահության համակարգին միացման և սպասարկման պայմանագիր.
5. Դեղատունն ունի վտանգավոր թափոնների վնասազերծման ոլորտում համապատասխան լիցենզիա ունեցող որևէ կազմակերպության հետ կնքված պայմանագիր.
6. Դեղատունը ակցեպտը ներկայացնելուն նախորդող 5 տարիների ընթացքում սնանկ չի ճանաչվել.
7. Դեղատունը չունի ժամկետանց պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով.
8. Հիմնադրամի և դեղատան միջև հօգուտ ապահովագրված անձի պայմանագիր կնքելու հարցի քննարկման պահին դեղատնային գործունեության իրականացման լիցենզիան չի կասեցվել «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 3.1, 4-րդ, 5-րդ, 7-8-րդ կետերով սահմանված հիմքերով.
9. Հիմնադրամի և դեղատան միջև հօգուտ ապահովագրված անձի պայմանագիր կնքելուն նախորդող վերջին 3 տարիների կտրվածքով դեղատանն իրականացված ուսումնասիրությունների, դիտարկումների, մշտադիտարկումների, փորձագիտական կամ համանման այլ աշխատանքների ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների կոպիտ խախտումներ, դեղատան հետ հօգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրով նախատեսված դրույթների էական խախտումներ չեն հայտնաբերվել կամ առկայության դեպքում դրանք վերացվել են
10. Դեղատունն ունի բավարար ֆինանսական միջոցներ, անհրաժեշտ կադրային ռեսուրսներ, շենքային պայմաններ ապահովագրական փաթեթը տրամադրելու համար
11. Դեղերի հատկացումը իրականացվում է առողջության առաջնային պահպանում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշմամբ սահմանված կարգով գրված դեղատոմսի հիման վրա,
12. Դեղի դուրսգրումն իրականացվում է Կառավարության կողմից հաստատված և հրապարակված փոխհատուցվող դեղերի ցանկին համապատասխան,

13. Դեղատունը դեղը տրամադրելիս էլեկտրոնային առողջապահական համակարգում մուտքագրում է դեղի տրամադրման վերաբերյալ օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունը, այդ թվում՝ համավճարի չափի մասին

14. Դեղատան աշխատակիցներն ունեն ԱՐՄԵԴ համակարգի հետ աշխատելու կարողություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ